GOVERNMENT OF MALTA
MINISTRY FOR EDUCATION, SPORT, YOUTH
RESEARCH AND INNOVATION
OFFICE OF THE PERMANENT SECRETARY

Հարգելի ծնողներ/խնամակալներ,

Սույն նամակը պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն կապված մանկավարժների գործադուլի հետ, որը տեղի կունենա երկուշաբթի 2023 թվականի նոյեմբերի 27-ին:

Մենք գիտակցում ենք ուսանողների՝ համապատասխան կրթության իրավունք ստանալու կարևորությունը, ինչն ապահովում է որակյալ ծառայություն և միևնույն ժամանակ երաշխավորում է նրանց բարեկեցությունը: Այդ նպատակով Մալթայի և Գոզոյի պետական տարրական և միջնակարգ դպրոցները իրենց դռները կբացեն խստորեն պաշտոնական աշխատանքային ժամերին: Այդ օրը դպրոցները կմատուցեն միայն վերահսկողական ծառայություններ: Աշակերտների այդ օրվա բացակայությունը կհամարվի **հարգելի** և չի պահանջվի գրություն կամ բժշկական տեղեկանք: Համաձայն սովորական ընթացակարգի, ծնողները կամ օրինական խնամակալները պետք է վերցնեն աշակերտներին մինչև դպրոցի փակման ժամը: Հետևաբար առավոտյան Breakfast Club-ը և երկարօրյա Klabb 3-16 ծառայություններն այդ օրը չեն գործի:

Վերջին օրերին իրականացված ռիսկերի գնահատումից ելնելով՝ սովորողների անվտանգությունն ապահովող ստորև նշված ծառայությունները, երկուշաբթի՝ նոյեմբերի 27-ին **չեն առաջարկվի**:

- Տրանսպորտ դեպի դպրոց/դպրոցից
- Նախաճաշի ակումբ Breakfast Club
- Երկարօրյա Klabb 3-16

Ուսուցման աջակցության կենտրոնները (Learning Support Centres), ռեսուրսային կենտրոնները (Resource Centres), Gem 16+, Ջովանի Կուրմիի ավագ դպրոցը (Giovanni Curmi Higher Secondary), Sir MA Refalo Sixth Form և ALP-ը **չեն գործի**:

Թույլ տվեք հիշեցնել, որ այս նամակում նկարագրված միջոցառումները երաշխավորում են յուրաքանչյուր աշակերտի առողջությունն ու անվտանգությունը: Հետևաբար Ձեր համագործակցությունը գնահատելի է:

Մենք պատրաստ ենք աջակցելու Ձեզ ցանկացած հարցի կամ լրացուցիչ տեղեկությունների դեպքում: Դուք կարող եք զանգահարել 25981150 հեռախոսահամարով: Այս զանգի ծառայությունը կգործի հինգշաբթի՝ նոյեմբերի 23-ին ժամը 13:00-ից մինչև 17:00-ը, ուրբաթ՝ նոյեմբերի 24-ին՝ ժամը 7:30-ից մինչև 17:00-ը, շաբաթ օրը՝ նոյեմբերի 25-ին և կիրակի՝ նոյեմբերի 26-ին ժամը 7:30-ից մինչև կեսօր, և երկուշաբթի՝ նոյեմբերի 27-ին ժամը 7:30-ից մինչև 17:00-ը: Մեզ հետ կարող եք կապ հաստատել նաև 153 հեռախոսահամարով:

Երեքշաբթի, Նոյեմբերի 28-ին, կլինի սովորական դպրոցական օր, որը կներառի սովորաբար առաջարկվող բոլոր ծառայությունները:

Հարգանքներով՝
Մեթյու Վելլա
Մշտական քարտուղար